# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05/05/2022

## ՈՐՈՇՈՒՄ N 58-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն և հիմք ընդունելով Գորիս քաղաքի գլխավոր հատակագիծը

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի գլխավոր հատակագծում նախատեսվող փոփոխությանը և Գորիս համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,1355հա արոտավայրը (կադաստրային ծածկագիր՝ 09-003-0327-0089) փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա՝ «հասարակական կառուցապատման հողեր» գործառնական նշանակությամբ՝ հանգստի գոտի (հյուրանոցային սենյակներ, սրճարան) կառուցելու համար:
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

| Կողմ -10 | Դեմ -6 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|
| ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ | ԱԲՈՒՆՑ ՎԼԱԴԻՄԻՐ | |
| ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ | ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ | |
| ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ | ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ | |
| ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ | ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ | |
| ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ | ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ | |

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՄԱՇՈՒՐՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԵՆՈՒԱ

ՅՈՒԼՅԱՆ ԻՐԻՆԱ

ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2022թ. Մայիս «06»
ք.Գորիս